«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
1 ապրիլի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ապրիլի 2002 թվականի N 299
քաղ. Երևան

ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՒ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել՝

ա) հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) այն ապրանքների ցանկը, որոնց արտադրության, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալհարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմիններ՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) այն օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների ցանկը, որոնց արդյունահանման, շրջանառության ֆիզիկականծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմիններ՝ համաձայն N 3 հավելվածի:

(1-ին կետը լրաց., փոփ. 28.06.07 N 753-Ն)

2. Սահմանել, որ՝

ա) սույն որոշման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ.

բ) հարկ վճարողները 2002 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների համար սույն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված հաշվետվությունները ներկայացնում են մինչև 2002 թվականի ապրիլի 20-ը ներառյալ.

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.12.10 N 1761-Ն)***

(2-րդ կետը փոփ. 28.06.07 N 753-Ն, լրաց. 27.08.09 N 979-Ն, փոփ. 20.05.10 N 595-Ն, 30.12.10 N 1761-Ն)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի ապրիլի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
ապրիլի 1-ի N 299 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան սույնորոշմամբ հաստատված ցանկերում նշված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքներ արտադրողների և ներմուծող-իրացնողների կողմից նշված ապրանքների արտադրության ու շրջանառության ֆիզիկական ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկային մարմիններ հաշվետվություններ ներկայացնելու կարգը:

(1-ին կետը փոփ., լրաց. 28.06.07 N 753-Ն)

2. Սույն կարգի դրույթները տարածվում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում նշված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքներ արտադրողների և ներմուծող-իրացնողների վրա:

(2-րդ կետը փոփ., լրաց. 28.06.07 N 753-Ն)

3. Սույն կարգի իմաստով օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանք արտադրող և ներմուծող-իրացնող են համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) հարկ վճարողները, որոնք արտադրում կամ ներմուծում-իրացնում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքները:

(3-րդ կետը լրաց., փոփ. 28.06.07 N 753-Ն)

4. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև հաջորդող ամսվա 20-ը ներառյալ սույն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին (հաշվետվության ձևը կցվում է):

(4-րդ կետը փոփ. 28.06.07 N 753-Ն)

5. Հարկ վճարողները սույն կարգին կից ձևով հաշվետվություն ներկայացնելիս յուրաքանչյուր ապրանքատեսակի համար լրացնում են առանձին տող:

6. Հարկ վճարողները նշված հաշվետվությունները ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 20-ը ներառյալ կարող են ներկայացնել դրանց ճշտված հաշվարկները:

7. Սույն կարգի իմաստով հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամիսը կամ եռամսյակը:

Զև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՒ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը (անունը) _____
2. ՀՎՀՀ-ն _____
3. Հաշվետու ժամանակաշրջանը _____

Արտադրանքի՝											
տեսակը	ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	չափման միավորը*	մնացորդը՝ հաշվետու ժամանակա-շրջանի սկզբում	արտադրված քանակը	ներմուծված քանակը	իրացված քանակը	Կորուստ	Օգտագործված է սեփականարտադրությանհամար	մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	իրացումից ստացված հասույթը (դրամ)	միավորի միջին գինը

* Արտադրվող և (կամ) իրացվող արտադրանքի յուրաքանչյուր չափման միավորի համար լրացվում է առանձին տող:

_____

(հաշվետվությունը ներկայացրած (կազմված) պաշտոնատար անձի պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 200 թ. Կ.Տ.

(Զևը լրաց. 28.06.07 N 753-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
ապրիլի 1-ի N 299 որոշմամբ

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻԶԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Ապրանքատեսակի անվանումը	Չափման միավորը	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը)
1601	երշիկեղեն	կգ	եռամսյակային
1601 0099	նրբերշիկ և սարդելկա	կգ	եռամսյակային
0207	ընտանի թռչնի միս և մսամթերք	կգ	եռամսյակային
0401	կաթ	կգ	եռամսյակային
0405	կարագ և այլ կաթնային յուղեր	կգ	եռամսյակային
0406	պանիր	կգ	եռամսյակային
210500	պաղպաղակ	կգ	եռամսյակային
0407	թռչնի ձու՝ կճեպով	հատ	եռամսյակային
0901	սուրճ	կգ	եռամսյակային
1001	ցորեն	կգ	եռամսյակային
1101 00	ալյուր	կգ	եռամսյակային
1302	բուսական հյութ և խտահյութ	լ	եռամսյակային
1902	մակարոնեղեն	կգ	եռամսյակային
1905	հաց և հացաբուլկեղեն	կգ	եռամսյակային
2002	տոմատի մածուկ	կգ	եռամսյակային
2009	բնական հյութեր	լ	եռամսյակային
2201	հանքային ջրեր	լ	եռամսյակային
2202	զովացուցիչ ըմպելիք	լ	եռամսյակային
2203 00	գարեջուր	լ	ամսական
2204	գինի	լ	ամսական
2204 10 110 0	շամպայն-գինիներ	լ	ամսական
2207-2208	սպիրտ	լ	ամսական
2208	օղի և օղու-լիկյորի արտադրանք	լ	ամսական
2208 60	օղի	լ	ամսական
2208 20 120 0	կոնյակ	լ	ամսական
2402 20	ծխախոտ	հատ	ամսական
2402 2090	ծխախոտ ֆիլտրով	հատ	ամսական
2501 00	կերակրի աղ	կգ	եռամսյակային
(Տողը հանվել է 28.06.07 N 753-Ն)			
(Տողը հանվել է 28.06.07 N 753-Ն)			
(Տողը հանվել է 28.06.07 N 753-Ն)			
(Տողը հանվել է 28.06.07 N 753-Ն)			
(Տողը հանվել է 28.06.07 N 753-Ն)			

2710 00 250 0	բենզին	տոննա	ամսական
2710 00 590 0	դիզելային վառելիք	տոննա	ամսական
2711 12	հեղուկ գազ (պրոպան)	կգ	ամսական
2711 13	բնական գազ (բութան)	մ³	ամսական

(Ցանկը փոփ., լրաց. 11.08.05 N 1338-Ն, փոփ. 28.06.07 N 753-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2002 թվականի
ապրիլի 1-ի N 299 որոշման

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԱՏԳԱԱ-ի ծածկագիրը	Հանքանյութերի անվանումները	Չափման միավորը	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը)
2505 90 000	ավազ	մ³	եռամսյակային
2515 11 000, 2515 12	տուֆ	մ³	եռամսյակային
2517 10 100	խճաքար	մ³	եռամսյակային
2515 20 000	գաջ	տոննա	եռամսյակային
2523 10 000, 2523 21 000, 2523 29 000, 2523 30 000, 2523 90 100, 2523 90 800	ցեմենտ	տոննա	եռամսյակային
2516 11 000, 2516 12, 2516 90 000	բազալտ	մ³	եռամսյակային
2513 10 100	պեմզա	մ³	եռամսյակային
2516 90 000, 2517 10 200	ֆելզիտ	մ³	եռամսյակային
2507 00, 2508 30 000, 2508 40 000	կավ	մ³	եռամսյակային
2515 11 000, 2515 12, 2515 12 900	տրավերտին	մ³	եռամսյակային
2515 11 000, 2515 12, 2517 41 000	մարմար	մ³	եռամսյակային
2616 90 000, 7108 11 000, 7108 12 000, 7108 13 100, 7108 13 800, 7108 20 000	ոսկի	տոննա	եռամսյակային
2516 90 000	կվարցային դիորիտ	մ³	եռամսյակային
2603 00 000	պղինձ	տոննա	եռամսյակային
2516 11 000, 2516 12	գրանիտ	մ³	եռամսյակային
2516 90 000	գաբրոսիենիտ	մ³	եռամսյակային
2516 90 000	պորֆիրիտ	մ³	եռամսյակային
2505 10 000	ավազ կվարցային և կրեմնային	մ³	եռամսյակային
2517 20 000	հրաբխային խարամ	մ³	եռամսյակային
2521 00 000, 2522 10 000, 2522 20 000, 2522 30 000	կրաքար	մ³	եռամսյակային
2530 10 100	պեռլիտ	մ³	եռամսյակային
2529 30 000	սիենիտ	մ³	եռամսյակային

(Ցանկը լրաց. 28.06.07 N 753-Ն)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2002 թվականի
ապրիլի 1-ի N 299 որոշման

ՁԵ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԳԱԶԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հավելվածն ուժը կորցրել է 30.12.10 N 1761-Ն)